ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 109/2014-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05.11.2014թ. ք.Երևան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000թ. Հունիսի 2-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին>> № 102 հրամանի 1.5-րդ կետի <<ա>> ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Արդարադատության ակադեմիայի հաշվապահական հաշվառման տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով, 2014թ. նոյեմբերի 06-ից նոյեմբերի 20-ը անցկացնել ակտիվների և պարտավորությունների գույքագրում, մասնավորապես գույքագրել.

ա) հիմնական միջոցները,

բ) պաշարները

գ) դրամական միջոցները, դրամական փաստաթղթերը և խիստ հաշվառման բլանկները,

դ) հաշվարկները:

2.Գույքագրումն իրականացնել իրականացնել 2014 թվականի նոյեմբերի 1-ի զրո ժամի դրությամբ:

3.Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Մելիքյան՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր

Անդամներ՝ Ա.Խուրշուդյան՝ Արդարադատության ակադեմիայի հեռաուսուցման վարչության պետ,

Է. Ամիրխանյան՝ Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական վարչության պետ:

4.Գույքագրման հանձնաժողովին՝ գույքագրումն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000թ. հունիսի 2-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին>> №102 հրամանի պահանջների պահպանմամբ:

ՌԵԿՏՈՐ Ռ.ՄԵԼԻՔՅԱՆ